Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
1982

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ ԱՀ-543 26.09 2024թ.

«ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Հ. ՄԵՍՐՈՊՅԱՆԻ

Հարգելի՛ պարոն Մեսրոպյան,

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ի միջև 2024թ հունվարի 31-ին կնքվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-7 ծածկագրով դեղորայքի մատակարարման պայմանագիր, որի շրջանակներում «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ին՝ 12.09. 2024թ-ին պատվեր-հայտ է ներկայացվել 37-րդ չափաբաժնի մասով:

Պայմանագրի համաձայն պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, սահմանվում է 20 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն միչև օրս պատվերը չի մատակարարվել կամ մատակարարվել է թերի: «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 18.09.2024թ. ներկայացրած զեկուցագրի համաձայն՝ «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի իրականացրել ապրանքների մատակարարումը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հինք ընունելով Պայմանագրի 8.9-րդ կետը «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագիրը 15-րդ չափաբաժնի մասով՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա" պարբերության *"Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը..."*

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է պայմանագիրը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570053952390100 հաշվեհամարին վճարել որակավորման ապահովման՝ 757620 /յոթ հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովման՝ 505080 /հինգ հարյուր հինգ հազար ութսուն/ ՀՀ դրամ գումարները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի տնօրեն՝ Հ. Զոհրաբյան